ԱՎԱՐՏԱՃԱՌԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Հոկտեմբերի 4-ին, շաբաթ օրը, ժամը 15-ին, Վեհարանում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ վարդապետ Ասատուրյանի ավարտաճառի պաշտպանությունը՝ ծայրագույն վարդապետական գավազանի իշխանություն ստանալու համար:

Ավարտաճառի թեման էր՝ «Փրկագործության պատմության ընթացքը», որը բաղկացած էր 69 մեքենագրված էջերից:

Աշխատությունը բաժանված էր երեք մասերի.

Ա.) Քրիստոսի մարդեղությունը.

Բ) Քրիստոսի մարդեղության եռակի պաշտոնները, այն է՝ Քրիստոս որպես մարգարե, թագավոր և քահանա.

Գ) Մարդու աստվածայնացման կարելիությունը հարության ճանապարհով:

Ներկայացված աշխատությունը ուներ նաև ներածություն և մի համառոտ վերջաբան:

Վեհափառ Հայրապետի կողմից նշանակված հանձնաժողովը, որի կազմում էին Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը՝ որպես նախագահ, Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, Արթուն Հատիտյանն ու Պարգև Շահբազյանը՝ որպես հանձնաժողովի անդամներ, հանգամանորեն և բարեխղճությամբ ընթերցել էին Տ. Ավագ վարդապետի ավարտաճառը և Վեհափառ Հայրապետին ներկայացրած իրենց գրավոր զեկուցման մեջ նշել, որ հեղինակը կատարել է բարեխիղճ ու լուրջ աշխատանք, հմտորեն և հասկացողությամբ օգտագործել իր ընտրած թեմայի հետ առնչվող բավականաչափ աղբյուրներ, հայերեն և օտար լեզուներով:

Աշխատությունն ավելի կշահեր, եթե օգտագործվեր նաև Ս. Ներսես Շնորհալու և Ս. Գրիգոր Տաթևացու համապատասխան աշխատությունները:

Ավարտաճառի լեզուն ընդհանրապես հստակ է, շարադրանքը՝ պարզ: Տեղ-տեղ, սակայն, գործածվել են նորաձև բառեր, օրինակ՝ «աստվածայնացում», «կհիսուսանար», «աննհանցանք» և այլն: Այնուամենայնիվ, ամբողջ թեման գրվել է անկեղծ ապրումով և հավատավոր հոգու ընկալումով:

Քննիչ հանձնաժողովը ներկայացված աշխատությունը գնահատում է դրական և խնդրում Վեհափառ Հայրապետին թույլ տալ, որ Ավագ վարդապետը հանդես գա իր ավարտաճառի բանավոր պաշտպանությամբ:

Տ. Ավագ վարդապետը իր ավարտաճառի բանավոր պաշտպանության ընթացքում ներկայացրեց իր աշխատության բովանդակությունը, օգտագործած աղբյուրները և նրա պատրաստության համար տրամադրած ժամանակը:

Ապա քննիչ հանձնաժողովի կողմից Տ. Ավագ վարդապետին տրվեցին հարցեր՝ նրա ավարտաճառի բովանդակության վերաբերյալ, որոնց նա տվեց գոհացուցիչ պատասխաններ:

Հանձնաժողովը գնահատանքով է արձանագրում Տ. Ավագ վարդապետի ավարտաճառի նաև բանավոր պաշտպանությունը և արժանի համարում նրան ծայրագույն վարդապետական գավազանի տվչությանը և խնդրում Վեհափառ Հայրապետին՝ տնօրինել պարտն ու պատշաճը:

Վեհափառ Հայրապետը ջերմորեն շնորհավորում է Տ. Ավագ վարդապետի սույն հաջողությունը, նրան բարեմաղթում բեղմնավոր հովվական ու թեմական գործունեություն:

Վեհափառ Հայրապետի բարեհաճ արտոնությամբ հոկտեմբերի 7-ին, երեքշաբթի օրը, ժամը 12-ին, Տ. Սիոն արքեպիսկոպոսը Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում Ավագ վարդապետին շնորհում է ծայրագույն վարդապետական գավազանի իշխանություն:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է Տ. Ավագ ծայրագույն վարդապետ Ասատուրյանին այս շնորհաբաշխության առթիվ և բարեմաղթում, որ նա իր հետագա պաշտոնավարության ընթացքում, իրեն հատուկ հոգևորականի օծությամբ, հավատքով ու նվիրումով, հանդիսանա «Մշակ առանց ամօթոյ» Հայ Եկեղեցու ծառայության սպասավորության մեջ, մանավանդ իր թեմի ժողովրդի ծոցում, նաև միշտ աղոթող՝ բարեխնամ իրաքյան վերածնված հայրենիքի բարօրության, բարգավաճման և խաղաղության համար: